

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ.

ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ԱՂԵՏԱԲԵՐ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻՑ

Հիմնաբառեր. *տնտեսական անկում, ֆինանսական շուկա, տնտեսության ֆինանսավորում, դրամայնացում, արժույթային ճնշումներ*

ՀՀ կենտրոնական բանկը, որպես ՀՀ ֆինանսական շուկան կարգավորող և վերահսկող մարմին, ներկայիս ճգնաժամային իրավիճակում հանդես է գալիս տնտեսության վերականգնմանն աջակցողի և ցնցումները մեղմողի դերում: 2020 թվականի ընթացքում, համավարակի տարածմանը զուգընթաց, ՀՀ ֆինանսական շուկան կարողացել է համապատասխան գործիքներով ազդել տնտեսության վրա այնպես, որ ոչ միայն ֆինանսական ճգնաժամի ռիսկերը նվազեն, այլև տնտեսությունն սկսի վերականգնվել մարտյան խոր անկումից հետո: Բացի տնտեսությանը օժանդակելուց, ՀՀ ֆինանսական շուկան առ այսօր դիմակայում է արժույթային ճնշումներին՝ ուշադրության կենտրոնում պահելով տնտեսության ապադրության ցնցման գործընթացը, որի վրա ուղղակիորեն հակազդում է ավանդների և վարկերի փոկոսադրույքների սփռելի, ինչպես նաև արտարժույթային ներխուժումների միջոցով:

Համաձայն ԱՄՀ «Համաշխարհային տնտեսական հեռանկարը (WEO)» զեկույցի¹ համաշխարհային տնտեսությունը 2020 թվականի կտրուկ անկումից հետո դեռ մի քանի տարի կգտնվի վերականգնման գործընթացում՝ պահպանելով նախաճգնաժամայինից ցածր մակարդակը:

Ինչպես բոլոր մյուս տնտեսությունները, Հայաստանը նույնպես 2020 թվականին ենթարկվել է առողջապահական մեծ ցնցման, որը հանգեցրել է տնտեսական խոր անկման և անորոշությունների աճի, ինչպես նաև ի հայտ



Տարևիկ ՌՈՍՏՈՄՅԱՆ

ՀՊՏՀ մագիստրանտ

2019 թ., գերազանցությամբ ավարտելով ՀՊՏՀ բակալավրիատը («Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում»), ընդունվել է մագիստրատուրա՝ «Մակրոտնտեսական վերլուծություն» մասնագիտությամբ: Ուսմանը զուգահեռ, «Ամբերդ» հեղուկաբերական կենտրոնի հեղուկաբերական խմբի անդամ է, ինչպես նաև աշխատում է ՀՊՏՀ շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

¹ World economic outlook, A Long and Difficult Ascent, IMF, Oct. 2020.

են եկել նախորդ ճգնաժամերից էականորեն տարբերվող՝ ֆինանսական կայունության մարտահրավերներ: Սակայն, ՀՀ ֆինանսական շուկայի հիմնական ցուցանիշների դիտարկումը վկայում է վերջինիս բավական կայուն և ցնցումներին դիմակայող դիրքի մասին, ինչն էլ թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ տնտեսությունում ֆինանսական շուկան, աջակցելով իրական հատվածին, կանխում է բանկային ճգնաժամերի ռիսկերի առաջացումը: Այսինքն՝ ՀՀ ԿԲ-ն, համապատասխան գործիքակազմի միջոցով ներգործելով իրական հատվածի վրա, մեղմում է տնտեսություն ներթափանցած շոկերը՝ խոչնդոտելով տնտեսական անկումը:

Ֆինանսական շուկայի՝ համաշխարհային առողջապահական և տնտեսական ճգնաժամին դիմակայելու ունակությունը, ինչպես նշվում է ԱՄՀ՝ «Համաշխարհային ֆինանսական կայունություն» խորագրով 2020 թ. հոկտեմբերին հրապարակված զեկույցում², բնորոշ է ոչ միայն ՀՀ-ին, այլև, կարելի է ասել, ընդհանուր միտում է աշխարհի բոլոր երկրներում: Որպես այդպիսի միտման պատճառ մատնանշվում է համաշխարհային բանկային համակարգի՝ ճգնաժամի մեջ կապիտալի և իրացվելիության համեմատաբար բարձր բուֆերներով մտնելու փաստը, ինչը չենք կարող ասել 2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի պարագայում: Փաստորեն, 2008 թ.-ից հետո ներդրված կարգավորող շրջանակն առաջին անգամ փորձության է ենթարկվել համավարակի տարածման պայմաններում՝ հիմնականում ապացուցելով իր արդյունավետ բնույթը: Մակրոֆինանսական ցնցումների ազդեցությունների ոչ բարենպաստ հետևանքները, որոնք համընդգրկուն և կործանարար բնույթ էին կրում 2008 թ.-ի ճգնաժամի պայմաններում, համավարակի թեժացման շրջանում մեծապես զսպվել են քաղաքականության տարբեր գործողությունների միջոցով: Մասնավորապես՝ կարելի է նշել 2020 թ. մարտի վերջին ֆինանսական պայմանների թուլացումը, որը դրսևորվեց տոկոսադրույքների նվազման տեսքով, ինչն էլ խթան

հանդիսացավ ֆինանսական պայմանների հետագա մեղմացման համար, երկրներին և ձեռնարկություններին հնարավորություն տվեց օգտվելու կապիտալի շուկայի և բանկային ֆինանսավորման շարունակական հասանելիությունից, ինչպես նաև կանխելու իրացվելիության ճնշումների վերածումը լայնածավալ անվճարունակության³: Թեև այդ քայլերը թույլ են տվել կանխել ֆինանսական ճգնաժամը և թուլացնել COVID-19-ի ազդեցությունը տնտեսության վրա, այդուհանդերձ, տնտեսական կանխատեսումների վատթարացումը 2020 թ.-ին սպասվող համաշխարհային աճի մեծությունը խորապես տեղափոխել է բացասական տիրույթ:


Համավարակին ի պատասխան ձեռնարկված հակաճգնաժամային քաղաքականության աննախադեպ միջոցառումները խթանեցին ինչպես ներդրումային պահանջարկը, այնպես էլ վարկային հոսքը դեպի տնտեսություն: Բանկերը, ճգնաժամ թևակոխելով կապիտալի և իրացվելիության զգալիորեն ավելի ուժեղ բուֆերներով, հնարավորություն ունեցան շարունակելու վարկային միջոցներով տնտեսության ֆինանսավորումը:

Տնտեսական անկման շրջանում առավել կարևոր և արդյունավետ են ֆինանսական շուկայի այն գործողությունները, որոնք միտված են շոկերի մեղմմանը: Տնտեսական ակտիվության ցուցանիշի և բանկային հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի փոփոխությունների՝ 2019 թ. հունվարից 2020 թ. հոկտեմբեր ժամանակահատվածի շարժնեացի ուսումնասիրությունը (զծապատկեր 1) ցույց է տալիս թվարկված միջոցառումների նպատակային կիրառման արդյունքները:

Երկու ցուցանիշների համադրումից ակնառու է դառնում բավական հետաքրքիր և խոսուն մի պատկեր: Մասնավորապես՝ 2019-2020 թթ. ՀՀ-ում աճել է բանկային հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը. միայն 2020 թ. այդ աճը կազմել է ավելի քան 12%, իսկ 2019 թվականի համեմատ՝ ավելի քան

² Global financial stability report, Bridge to Recovery, IMF, Oct. 2020.

³ Ենյն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տնտեսական ակտիվության ցուցանիշի (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) և բանկային հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի փոփոխությունը 2019 թ. հունվար-2020 թ. հոկտեմբեր ժամանակահատվածում⁴

30%: Ու թեև 2020 թ. մարտից սկսած՝ ՀՀ տնտեսությունն անկման փուլում է (հոկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը նվազել է 0,6 տոկոսային կետով՝ կազմելով 91,9%), այդուհանդերձ, նկատվում է վարկավորման տեմպերի աճ, ինչը վկայում է ճգնաժամային իրավիճակներում ֆինանսական շուկայի կարևոր դերակատարման մասին: Փաստորեն, տնտեսության ֆինանսավորմամբ ֆինանսական շուկան փորձում է աջակցել դրա իրական հատվածին՝ կանխելով առավել խոր անկումը և բանկային ճգնաժամի առաջացման ռիսկերը:

Ըստ ԱՄՀ գնահատականների՝ համավարակի տարածման ողջ ընթացքում համաշխարհային բանկային համակարգը մնում է բավարար չափով կապիտալացված՝ որպես հակակշիռ լրացուցիչ անբարենպաստ ցնցումների⁵: Համանման իրավիճակ արձանագրվել է նաև ՀՀ-ում՝ պայմանավորված ինչպես բանկային հատվածի կայունությամբ, այնպես էլ տարվա ընթացքում Կենտրոնական բանկի ձեռնարկած գործողություններով՝ ուղղված տնտե-

սության ֆինանսավորման խթանմանը:


ՀՀ կենտրոնական բանկի 2020 թ. մայիսին ընդունած որոշման համաձայն⁶՝ հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվի իջեցմամբ (10%-ից մինչև 9%) և ընդհանուր կապիտալում լրացուցիչ կապիտալի կշռի մեծացմամբ (հիմնական կապիտալի 20%-ից մինչև 30%) հնարավորություն է ընձեռվել իրականացնելու տնտեսության լրացուցիչ վարկավորում, ինչպես նաև օգտագործելու ձևավորված կապիտալի բուֆերները: Այս քայլերը թույլ են տվել բանկերին ստորադաս փոխառությունների և կապիտալի այլ գործիքների ներգրավմամբ իրականացնել տնտեսության լրացուցիչ վարկավորում՝ միաժամանակ, ապահովելով բանկերի ֆինանսական կայունության համար անհրաժեշտ, հնարավոր ռիսկերը և վստասները կլանող գործիքների բավարար մակարդակ:

Այսպիսով՝ քաղաքականության ժամանակին արձագանքը նպաստել է վարկային հոսքը դեպի տնտեսություն պահպանելուն և անբարենպաստ մակրոֆինանսական հետադարձ կապից խուսափելուն՝ ստեղ-

⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԿԿ (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2019 թ. դեկտեմբեր, <https://armstat.am/file/doc/99517553.pdf>, 2020 թ. հոկտեմբեր, <https://armstat.am/file/doc/99520838.pdf>), ՀՀ ԿԲ, ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

⁵ Global financial stability report, Bridge to Recovery, IMF, Oct. 2020.

⁶ Մամուլի հաղորդագրություն, 8.05.2020, ԿԲ խորհրդի նիստում, <https://www.cba.am/AM/pmessagesannouncements/May%20A%2008.05.2020.pdf>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2


«Հ առևտրային բանկերի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի աճի տեմպի ըստ արժույթային կառուցվածքի 2020 թ. հունվար – հոկտեմբեր ժամանակահատվածում»

Ճելով կամուրջ դեպի վերականգնում:
 Հայաստանի տնտեսության՝ դոլարայինացման բարձր մակարդակ ունենալու, ինչպես նաև մշտապես իր վրա արժույթային ցնցումներ կրելու հանգամանքը պայմանավորում է վարկերի և ավանդների արժույթային կառուցվածքի մշտադիտարկման անհրաժեշտությունը (գծապատկեր 2):
 Նախևառաջ, նկատենք, որ դրամային և արտարժույթային վարկերի աճը տարվա ընթացքում եղել է տատանողական. մարտին, որպես տնտեսական անկման շրջանի սկիզբ, գրացվել է դրամային վարկերի կտրուկ նվազում, ինչն ուղեկցվել է արտարժույթային վարկերի ավելացմամբ: Սակայն, արդեն ապրիլից սկսած՝ տատանումը մեղմվել է, և մինչև օգոստոս կայունացման միտում է նկատվել՝ ընդհուպ դրամային վարկերի գերազանցում արտարժույթայինին: Այդ միտումը շարունակվել է մինչև հոկտեմբեր: Տնտեսությունում դրամայինացմանը նպաստել է սպառողական և ծրագրային հիփոթեքային վարկերի աճը, ինչպես նաև համավարակի հաղթահարմանն ուղղված՝ ՀՀ կառավարության միջոցառումների շրջանակում դրամային վարկերի տրամադրումը⁷:

Ապադոլարայինացման գործընթացը նկատվել է նաև ավանդների արժույթային կառուցվածքի փոփոխություններում և դրամային ու արտարժույթային ավանդների տոկոսադրույքների սփրեդի մեծացման մեջ (գծապատկեր 3):

Տարվա ընթացքում արտարժույթային ավանդների կշիռն ընդհանուր ավանդներում նվազել է՝ հոկտեմբերին կազմելով 53,1%, ինչն արտացոլում է դոլարայինացման մակարդակի նվազումը: Նույն ժամանակահատվածում արձանագրվել է դոլար/դրամ փոխարժեքի արժեզրկում, մասնավորապես՝ դեռևս առաջին եռամսյակի վերջին նկատվել են փոխարժեքի արժեզրկման ճնշումներ, որին նպաստել են արժույթային շուկայում իրացվելիության նկատմամբ կարճաժամկետ բարձր պահանջարկի ազդեցությունները, որոնք երկրորդ եռամսյակում ԿԲ ջանքերով բավական մեղմվել են: Մեղմման համար հիմք է հանդիսացել արտարժույթի սվոփ գործիքի և ԿԲ-ի կողմից ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքների (զուտ վաճառքի ծավալը՝ 23.9 մլն ԱՄՆ դոլար) կիրառումը⁸: Այսպիսի ուղիներով արտարժույթային իրացվելիության տրամադրումը հնարավորություն է տվել ապահովելու արժույթային շուկայի բնականոն գործունեությունը: Այնուհետև

⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx> և հեղինակի հաշվարկներ, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>
⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020 թ. I կիսամյակ, https://www.cba.am/AM/ppercials/Stability%20report_1_20.pdf
⁹ Նույն տեղում:



ԳԾԱՊՈՍԿԵՐ 3

ՀՀ առևտրային բանկերի ներգրաված ավանդների արժույթային կառուցվածքը և դոլար/դրամ միջին ամսական փոխարժեքը 2020 թ. հունվար - հոկտեմբեր ժամանակահատվածում¹⁰

արտարժույթային ճնշումներ սկսվել են հուլիսին և խորացել նոյեմբերին՝ հունվարի 479,2-ի փոխարեն կազմելով 499,6 դրամ: Արժեզրկման միտումը շարունակվել է նաև դեկտեմբերի սկզբին, և, համաձայն ՀՀ առևտրային բանկերի տվյալների, դոլար/դրամ փոխարժեքը հատել է 500 դրամի սահմանը: Այս երևույթի պատճառ են հանդիսացել ոչ միայն համավարակից առաջացած ցնցումները, այլև երկրում հայտարարված ռազմական դրությունը, ինչն անդրադարձել է բնակչության սպասումների ու վստահության վրա և հանգեցրել դրամի կտրուկ արժեզրկման. տարվա ընթացքում դրամը փաստացի արժեզրկվել է ավելի քան 4%-ով: Արժույթային ճնշումները մեղմելու նպատակով նոյեմբերի վերջին ԿԲ-ն նորից միջամտել է՝ գործի դնելով արտարժույթի տրամադրման սվոփ գործիքը և ավելացնելով հիմնական վերաֆինանսավորման գործարքները: Մասնավորապես՝ նոյեմբերին, հոկտեմբերի համեմատությամբ, հիմնական վերաֆինանսավորման գործարքների ծավալն ավելացել է ավելի քան 50%-ով՝ հասնելով 342 952 միլիոն դրամի, իսկ արտարժույթի տրամադրման սվոփ գործիքը մայիսից հետո առաջին


անգամ կիրառվել է հոկտեմբերին՝ 59 723 միլիոն դրամ ծավալով, և, համաձայն ԿԲ-ի, այն կիրառվում է նաև դեկտեմբերին՝ ավելի քիչ ծավալով: Հետևելով դեկտեմբերի սկզբից դրամի փոխարժեքի կայունացման միտումին՝ կարելի է մատնանշել, որ ԿԲ-ի կողմից իրացվելիության տրամադրումը կարողացել է ճիշտ չափաբաժնով ազդել արժույթային տատանումների վրա՝ խուսափելով տնտեսության ավելի խոր ցնցումներից:

ԱՄՀ միջինարևելյան և Կենտրոնական Ասիային նվիրված «Տարածաշրջանային տնտեսական հեռանկարներ» զեկույցում¹¹ կանխատեսում է կատարվել նաև ՀՀ տնտեսությունում արժույթային մեծ տատանումների մասին: Զեկույցի հեղինակների կարծիքով, դա պայմանավորված է ՀՀ՝ որպես դոլարայինացված տնտեսություն լինելու հանգամանքով: Սակայն, ինչպես կարելի է նկատել, ՀՀ կենտրոնական բանկն ի գործ է եղել ազդելու ոչ միայն համավարակից, այլև պատերազմական վիճակից բխող արժույթային բացասական ցնցումների վրա:

Վերջին ամիսների արժույթային տատանումները զուգորդվել են ավանդների

¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>, արտաքին հատվածի վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> և հեղինակի հաշվարկներ:

¹¹ Regional Economic Outlook, Middle East and Central Asia, IMF, Oct. 2020.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4





ՀՀ առևտրային բանկերի ներգրաված ավանդները 2019 թ. հունվար-2020 թ. հոկտեմբեր ժամանակահատվածում¹²

«փախուստով». սեպտեմբերին և հոկտեմբերին դրանք նվազել են շուրջ 2%-ով (գծապատկեր 4):

Ավանդների այդչափ նվազումը կարող է մեծացնել իրացվելիության ռիսկերը: Նշված տատանումների կարգավորման նպատակով ԿԲ-ն սույն թվականի նոյեմբերի 24-ին հայտարարել է ՀՀ արտարժույթային շուկայում գործառնությունների իրականացման մասին¹³: Այս քայլերի անհրաժեշտությունը նկատվել է պատերազմական վիճակի խորացմանը զուգահեռ, քանի որ նոյեմբերին ավանդների «փախուստն» ավելի է արագացել՝ պայմանավորված ար-

ժուրային մեծ տատանումներով, իսկ դեկտեմբերին ԿԲ-ն արդեն թուլացրել է վերոնշյալ երկու գործիքները՝ ավելցուկային իրացվելիությունից խուսափելու համար. մասնավորապես՝ արտարժույթի տրամադրման սվոփ գործիքը՝ 31 540 միլիոն դրամ, հիմնական վերաֆինանսավորման գործիքը՝ 278 783 միլիոն դրամ:

Տնտեսության դրամայնացմանը և ճրգնաժամային զարգացումների կայունացմանն ուղղված միջոցառումներից է դրամային ու արտարժույթային ավանդների տոկոսադրույքների սփրեդի նվազեցումը (գծապատկեր 5 և 6):




ԳԾԱՊԱՏԿԵՐ 5



ՀՀ առևտրային բանկերի ներգրաված՝ մինչև 1 տարի ժամկետով ավանդների տոկոսադրույքները 2020 թ. հունվար – հոկտեմբեր ժամանակահատվածում¹⁴

¹² Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx> և հեղինակի հաշվարկներ:
¹³ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/News/Pages/news_30-06-20_1.aspx#sthash.SzTjuwxu.FPxVljcX.dpbs
¹⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

ՀՀ առևտրային բանկերի ներգրաված՝ 1 տարուց ավելի ժամկետով ավանդների տոկոսադրույքները 2020 թ. հունվար – հոկտեմբեր ժամանակահատվածում¹⁵

Ինչպես նկատում ենք, իրավաբանական անձանց ավանդների տոկոսադրույքները դիտարկվող ժամանակահատվածում տատանողական բնույթ են ունեցել: Փոխարենը՝ հարաբերականորեն կայուն վարք են դրսևորել ֆիզիկական անձանց ավանդների տոկոսադրույքները: Առաջին խոշոր փոփոխությունը եղել է ապրիլին, այնուհետև հուլիս-օգոստոսին: Բացի այն, որ ՀՀ կենտրոնական բանկը փորձել է կայունացնել նշված տատանումները տոկոսադրույքների սփրեդի նվազեցմամբ, միաժամանակ, նա չի դիմել դոլարային ավանդների տոկոսադրույքների բարձրացման, ինչը հիմք է տալիս ասելու, որ տնտեսության դրամայնացման գործընթացը մեծ կարևորություն ունի իրականացված գոր-

ծողություններում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ վերջին ամիսներին ՀՀ ԿԲ գործողությունները նպաստել են ֆինանսական շուկայի կայունության ապահովմանը, բանկային համակարգի վստահելի և կայուն դիրքերի պահպանմանը՝ առաջանցիկ միջոցառումներով օժանդակելով տնտեսությունն առավել խոր անկումից փրկելուն: Ուստի չափազանց կարևոր է, որ բանկերի բուֆերների վերակառուցումը, ոչ բանկային ֆինանսական հաստատությունների կարգավորումն ու պրոլոնգացիալ վերահսկողության ուժեղացումը շարունակեն մնալ որպես ֆինանսական քաղաքականության գերակայություններ:

¹⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԿԲ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020 թ. I կիսամյակ, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_1_20.pdf
2. World economic outlook, A Long and Difficult Ascent, IMF, Oct. 2020
3. Global financial stability report, Bridge to Recovery, IMF, Oct. 2020
4. Regional Economic Outlook, Middle East and Central Asia, IMF, Oct. 2020
5. ՀՀ վԿ, <https://www.armstat.am/>
6. ՀՀ ԿԲ, <https://www.cba.am/>

Татевик РОСТОМЯН
Магистрант, АГЭУ

ФИНАНСЫ

СОДЕЙСТВИЕ ФИНАНСОВОГО РЫНКА ЭКОНОМИКЕ РА: КАК ИЗБЕЖАТЬ КАТАСТРОФИЧЕСКИХ КОЛЕБАНИЙ?

Центральный банк РА, как регулирующий и надзорный орган финансового рынка, в нынешней кризисной ситуации выступает в роли посредника в восстановлении экономики. Параллельно с распространением пандемии в течение 2020 года финансовый рынок Армении сумел соответствующими инструментами повлиять на экономику таким образом, чтобы не только снизились риски финансового кризиса, но и экономика начала восстанавливаться после серьезного мартовского спада. Помимо содействия экономике, финансовый рынок Армении по сей день противостоит валютному давлению, не упуская из внимания также процесс дедолларизации экономики, на который напрямую влияет посредством валютных интервенций и воздействием на спреда процентных ставок по вкладам и кредитам.

Ключевые слова: *экономический спад, финансовый рынок, финансирование экономики, драматизация, валютное давление*

Tatevik ROSTOMYAN
MA Student, ASUE

FINANCES

RA FINANCIAL MARKET'S SUPPORT TO THE ECONOMY: HOW TO AVOID CATASTROPHIC FLUCTUATIONS?

The Central Bank of Armenia, as the financial market regulator and supervisory authority, acts as a facilitator of economic recovery and softener of shocks in the current crisis situation. Along with the spread of the pandemic in 2020, the Armenian financial market has been able to influence the economy with appropriate tools so that not only the risks of the financial crisis were reduced, but also the economy began to recover after a major downturn in March. In parallel with supporting the economy, the Armenian financial market is still resisting currency pressures, without distracting attention to the process of de-dollarization of the economy, which is directly affected by changes in the spread of deposits and loan rates, as well as through foreign currency interventions.

Key words: *economic downturn, financial market, financing of the economy, dramization, currency pressures*